ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական սոցիալական խարտիայի և Սոցիալական ապահովության եվրոպական օրենսգրքի կառավարման կոմիտեի 150-րդ նիստին մասնակցելու նպատակով կատարած այցի արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը.**

Մարիետա Սարգսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ստրասբուրգ (Ֆրանսիայի Հանրապետություն) 2025 թվականի մայիսի 19-ից 23-ը

4. **Հրավիրող կողմը.**

Եվրոպայի խորհուրդ

5. **Գործուղման նպատակը.**

Եվրոպական սոցիալական խարտիայի և Սոցիալական ապահովության եվրոպական օրենսգրքի կառավարման կոմիտեի նիստերը գումարվում են տարեկան երկու անգամ: Նիստերի նպատակն է քննարկել Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից Եվրոպական սոցիալական խարտիայի և Սոցիալական ապահովության եվրոպական օրենսգրքի կիրարկման հետ կապված հարցերը: Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները խարտիայի դրույթների կիրարկման ընթացքի վերաբերյալ ազգային զեկույցներ են

ներկայացնում: Ներկայացված զեկույցների հիման վրա Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն եզրակացություններ է ուղարկում խարտիայի դրույթների նկատմամբ անդամ պետությունների օրենսդրությունների անհամապատասխանությունների վերաբերյալ: Նշյալ անհամապատասխանությունների հետ կապված հարցերը քննարկվում են կոմիտեի նիստերի ընթացքում և կայացվում են որոշումներ: Այս տարվա քննարկման առարկան էր Սոցիալական ապահովության եվրոպական օրենսգրքի և վերջինիս արձանագրությունների՝ վավերացրած երկրների մասով անհամապատասխանությունները (ՀՀ-ն չի վավերացրել):

6. Քննարկված թեմաները.

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ի թիվս այլ հարցերի՝ այս տարվա քննարկումները նվիրված էին նաև 2026 թվականի մարտի 18-ին Մոլդովայում կայանալիք Եվրոպական սոցիալական խարտիային նվիրված նախարարական համաժողովին, անդամ պետությունների կողմից զեկույցներ ներկայացնելու պարտավորության կատարմանն ու թերակատարմանը, Խարտիայի չընդունված դրույթներին միանալու առնչությամբ զարգացումներին, Եվրոպայի խորհրդի սոցիալական իրավունքների շրջանակի վերաբերյալ կրթության և վերապատրաստման հանձնարարական-առաջարկին, ad-hoc զեկույցներին, մասնավորապես՝ “Cost-of-Living Crisis” մասով ներկայացված զեկույցներին, կառավարական կոմիտեի բյուրոյի անդամի ընտրությանը:

Նիստերի ընթացքում անդրադարձ եղավ նաև Եվրոպայի խորհրդի ավելի լայն գործունեությանն ու Եվրոպական սոցիալական խարտիայի և դրա արձանագրությունների կարգավիճակի վերաբերյալ թարմացումներին: Նիստի ընթացքում ներկայացրել եմ «Առողջության պաշտպանության իրավունքի» հոդվածի՝ ՀՀ կողմից վավերացման գործընթացի առնչությամբ զարգացումները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Եվրոպական սոցիալական խարտիայի և Սոցիալական ապահովության եվրոպական օրենսգրքի կառավարման կոմիտեի 150-րդ նստաշրջանի ընթացքում քվեարկության արդյունքում Մոլդովայի ներկայացուցիչն

ընտրվեց կառավարական կոմիտեի բյուրոյի անդամ, լայնածավալ քննարկումների արդյունքում ընդունվեց Եվրոպայի խորհրդի սոցիալական իրավունքների շրջանակի վերաբերյալ կրթության և վերապատրաստման հանձնարարական-առաջարկը, հաստատվեց հաջորդ նիստի ժամկետը (սույն թվականի նոյեմբերի 17-ից 21-ը):

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկություններ չկան:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

27.05.2025